

ԱՇԽԱՏԱՆՔ—ԼԵԶՈՒ.—ՄԻՏՔ

ՀԱՅԵՐԵՆ «ԲԱՆ», «ԲԱՐ» ԵՎ «ԿԱՐ» ԲԱՌԱՓՆՋԵՐԸ
ԸՍՏ «ԼԵԶՎԻ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔԻ» ՏՎՅԱԼՆԵՐԻ

(Լեզվա-հնէաբանական-իմաստաբանական եւքիզ)

Լեզուն՝ մարդկային բարբառը, ոչ միայն հասարակական կյանքի, հաղորդակցման ամենակարեւոր գործիքն է, ոչ միայն տնտեսական բաղիսի իդեոլոգիական արտահայտությունն է, այլեւ՝ բոլոր իդեոլոգիաների հիմնական արտադրական միջոցն ու կազմակերպիչն է. առանց լեզվի չկա մտածողություն, փիլիսոփայություն, գիտություն և այլն: Լեզուն ամենաառաջին և առաջնակարգ վերնաշէնքն է, որ կանգնեցրել է մարդկային հասարակությունը իր նյութա-տնտեսական բաղիսի վրա. լեզուն է հնարավորություն տալիս համատեղ աշխատանքի կազմակերպման և առհասարակ աշխատանքային պրոցեսների իրականացման, իսկ մարդկային հասարակության հիմքն էլ աշխատանքային գործունեությունն է: Այստեղից բնականաբար բխում է այն հետաքրքրությունը, որ գիտությունը ցուցաբերել է դեպի լեզուն՝ այդ հնագույն իդեոլոգիական արտահայտությունը, թեև մինչմառյան լեզվաբանությունը կտրված է եղել հասարակական դիտություններից և իդեալիստական ակնոցներով է մտնեցել իր առարկային: Հնդեվրոպական կոչվող լեզվաբանությունը, որը բուրժուական աշխարհում մինչև այժմ դեյուրե միակ ճանաչված գիտությունն է լեզվի վերաբերյալ՝ զբաղվել է ոչ թե առհասարակ մարդկային լեզվի ծագման ու զարգացման խնդիրներով հասարակական կյանքի զարգացմանն առնթեր, այլ ուսումնասիրել է պատմականորեն առաջացած մի խումբ լեզուներ և, որ, այդ գիտության գլուխ գործոցն է կազմում, ստեղ-

ծել է հնդեվրոպական «նախամայր լեզուն» իր բառարանով ու քերականությամբ, ստեղծել է նույնիսկ... գրականություն այդ «նախամայր լեզվով», որը երբեք և ոչ մի անդ գոյություն չի ունեցել: Հնդեվրոպաբանությունն ստեղծել է տեխնիկայով ու ճարտարարվեստով հիացմունք պատճառող մի գեղեցիկ շենք, որը սակայն ավազի վրա է հանգչում. այդ շենքը հիմք չունի, որովհետև հնդեվրոպաբանությունը չի գրադվի լեզվաստեղծական երկար պրոցեսի քննությամբ և երբեք չի պատասխանել այն հարցին, թե ինչպես է առաջացել մարդկային բարբառաժամանաստույգ պատասխանը, որ այդ հարցին տալիս է պաշտոնական գիտությունը, այն է՝ թե հնդեվրոպականների նախնիքն երբեմն ծաղրել են Պամիրում կամ Հնդկաստանում (կամ ինչպես վերջին ժամանակներս են պնդում՝ կարպատներից—էիտվա), ապա բաժանվել են և ստեղծել «դուստր» ժողովուրդներ ու լեզուներ. ահա այդ դուստր լեզուների վրա է, որ ծանրանում է հնդեվրոպաբանությունը՝ չունենալով նրա ծագման մասին հստակ պատկերացում: Պարզ է, որ այդպիսի գիտությունից աղելին սպասել չի կարելի, ինչպես և պարզ է ու հասկանալի, թե ինչու ոչ այլուր, քան Սովետական Միության մեջ չտեսնված թափով սկսել է առաջ գնալ լեզվի իսկական գիտությունը՝ մատերիալիստական լեզվաբանությունը, որի լավագույն ներկայացուցիչները հարել են ակադեմիկոս Մառի «Հարեթաբանություն» կամ «լեզվի նոր ուսմունք» անունը կրող գալրոցին: Մառը լեզվաբանության մեջ արեց այն, ինչ որ Մարքսը Հեգելի փիլիսոփայության մեջ, այսինքն իդեալիստական գլխից կաճեցրեց մատերիալիստական ոտքի: «Լեզվի նոր ուսմունքը» գտնում է, որ լեզուն ի սկզբանե չի եղել, վերուստ տրված մի նվեր չէ, որ այն ստեղծել է հասարակական մարդը իր քրաքնքի և աշխատանքի միջոցով, որպես անհրաժեշտ միջոց իր գոյության պայքարի համար. նա ուսումնասիրում է մարդկային լեզուն առհասարակ, առանց խտրություն դնելու հնդեվրոպական կամ արիական և մյուս «վայրենի, անկուլտուրական» կամ «անարիական» լեզուների միջև: «Լեզվի նոր ուսմունքի» կարեւորագույն նվաճումներից մեկն էլ լեզվաբանական հնէաբանությունն է (պալեոնտոլոգիան), որը մեզ հնարավորություն է տալիս թափանցելու լեզվաստեղծական հնագույն շրջանները:

Եվ իրոք, պատմական մատերիալիզմի զենքերով զինված լեզվահնէաբանության միջոցով հնարավոր է գտնում ժամանա-

կակից լեզուների մեջ «պեղումներ» կատարելով հայտաբերել լեզվի ստեղծման ամենահին շրջանները և աշխատանքային պրոցեսների արտահայտությունը նրանց մեջ:

Այստեղ մենք վերլուծելու ենք աշխատանքի ամենապրիմիտիվ պրոցեսների արտահայտությունը լեզվի (խմա—մտածողության) մեջ: Մեր առաջ նախնական մարդն է, որի արտադրական հիմնական և հավարյա միակ զենքը նախագործիք ձեռքն է. ձեռքով է նա վերարտադրում իր գոյությունը, ձեռքով պաշտպանվում թշնամիներից և, ինչպես ապացուցում է լեզվի նոր ուսումունքը, ձեռքով էլ հաղորդակցվում իր նմանների հետ. ձեռք-լեզվի կամ կրնետիկ լեզվի ստադիան է դա: Ինքնին հասկանալի է, որ տակավին վերացական մտածողությունից զուրկ (ըստ էնգելսի, մարդուն իր զարգացման ցածր աստիճանում հատուկ է կենդանիների հետ, միայն կոնկրետ մտածողությունը), կոնկրետ, «նախատրամաբանորեն մտածող» այդ մարդու համար կոնկրետ իրը՝ ձեռքը ամեն ինչ էր. ով ուժեղ, հատուկ ձեռք ուներ՝ նա էլ խելոք և համնաբ էր, իսկ ում ձեռքը թույլ էր, անզոր՝ նա խեղ էր (և խել):

Այժմ մի փոքրիկ պեղումով մենք հեշտությամբ կարող ենք այդ ժամանակի հասարակական մարդու մտածողության արտահայտությունը գտնել հենց թեկուզ հայերենի մեջ: Վերևը արդեն գործածված խելոք, համնաբ և խեղ բառերը լեզվաստեղծական այդ հնագույն շրջանի մնացորդներն ու նստվածքներն են հայերենում: Թե՛ «խելոք», թե՛ «հանճար» և թե՛ «խեղ» (անձեռ, նաև՝ անխելք) բառերը ծագում են ձեռք բառից: Վրացերենն էլ (խել) ձեռք բառը դրա լավագույն ապացույցն է. սակայն, հենց մեր «խեղ» բառը իր մեջ պահել է ձեռքի դադարիտը, որովհետև նա նշանակում է անձեռք (արդյոք ժողովրդական «խել» հիմար նույն «խել» արմատից չէ՞): Ի միջի այլոց հիշատակենք, որ վրացերենում էլ (խել) բացի ձեռք իմաստից ունի նաև խենթ, հիմար իմաստը, որտեղից՝ «խելոքա»՝ հիմարություն, խենթություն, «խելոկի»՝ հիմար: Իզուր է հնդեվրոպաբանությունը ջանում մեր «խել» և «խեղ» արմատները իրարից անջատել՝ վերջինը բխեցնելով հնդեվրոպական նախամայր լեզվի sgel (սգել) ծռել, կորացնել արմատից, ըստ որում միաժամանակ ընդունելով, որ մեր խեղ բառի ծագումը նախամայր լեզվի «սգել» արմատից կատարվել է «տակավին լավ չպարզաբանված ձայնաբանական օրենքներով» (տես «Արմատական բա-

առարան» հատոր 3-րդ, էջ 456): Մատերիալիստական լեզվաբանությունը գիտականորեն ժխտել է նախամայր լեզվի և լեզուների գոյությունը (վերջերս հնդեվրոպաբանները իրենք արդեն հասկանալի են ենթարկում այդ) և ապացուցել, որ լեզուների դարգացումը գնացել է ոչ թե նախամայրերից դեպի դուստր լեզուները կամ ընդհանուր լեզվից դեպի բազմաթիվ լեզուներ, այլ ընդհակառակն՝ անհամար մանր տոհմային լեզուներից, վերջիններիս դիալեկտիկական անընդհատ խաչավորումների միջոցով, դեպի ավելի մեծ կոլեկտիվների լեզուները: Եվ ուրիշ հերպ էլ չէր կարող լինել, որովհետև հնագույն շրջաններում հասարակական մեծ կոլեկտիվների գոյությունը հնարավոր չէր արտադրական պրիմիտիվ միջոցների պայմաններում:

Մեր երկրորդ բառը՝ «հանճար», նույնպես առաջացել է ձեռք գաղափարն արտահայտող միևնույն բառերի գումարումով (հան + ճար = ձեռք + ձեռք), ըստ որում «հան» արմատից հայերենը պահպանել է համեմատաբար բառը, իսկ 2-րդ արմատը (ճար) մնացել է կտր ձևով, որը նշանակում է «ուժ», «գործություն», «կարողություն» (որպես ձեռքի հատկություններ): Բացի այդ, ունենք ժողովրդական նախաձեռնություն, հնարագիտություն և նախաձեռնություն, բերել: Մեր նախնիքները վրացերենում համապատասխանում է ჯარი (տար), որ նշանակում է «կոթ», «բռնելի» և ծաղում է ձեռքից (համեմատիր ռուսերեն ручка < рука): Սակայն այս նույն նախաձեռնությունը կտր արմատը հայերենի մեջ ունի բազմաթիվ գործածություն զանազան ձայնափոխություններով, բայց միջախառնարանական նույն ոլորտի մեջ (ձեռք, աշխատանք և բանականություն): Հնարավոր է, որ այդ տարբերակները առաջացել են թե՛ ձայնափոխությամբ և թե՛ խաչավորումների միջոցով:

Դժնություն տունենք այժմ այդ բառերը:

Կտր՝ կարենալ, ուժ ունենալ, ձեռնհաս լինել մի բան անելու, այստեղից զարգացել է իբրև ուժ (կարող), որից է և գրաբարի կտրի մակբայը (համեմատիր գրաբար յոյժ բառ հետ), որից և արդի կտրել (կար անել), որ ձեռքի ֆունկցիաներից մեկն է:

Կտն՝ (որից՝ կտրկտնել՝ մեկնել, ձեռք մեկնել, կառուցանել) ղինել, հաստատել, որ ձեռքի ֆունկցիաներն են:

Կիր՝ ձեռքի ներգործությունը ենթարկել, կատարել (ի

կիր արկանել, կիր-առել), որ առաջացել է a || i ձայնական լծորդությամբ:

Որպես ապացույց այն հանգամանքի, որ կար, կառ և կիր արմատները ծագում են իրոք անփ արտահայտող բառից, կարելի է հիշատակել մինչև այժմ պահպանված ժողովրդական «կառ» ձևը բառը, իսկ այն հանգամանքը, որ նույնիսկ գրաբարի մեջ ունենք կառ արմատը (ծեծված, աշխատանքի տակ ընկած), որից են կռել, կռան, բացարձակ կերպով ապացուցում է, որ հին հայերի մոտ կըռ կամ կըր արմատը ա || ու || ի լծորդությամբ գործածական է եղել որպես ձևը գաղափարը արտահայտող բառ:

Ինչպես վերևում դիտեցինք խել (ձևը) բառից կազմվել է խելք (միտք) բառը. նույնը կատարվել է նաև կառ բառի հետ, որին հարազատ են կառհ→կռահ(ել), որ նշանակում է գուշակել, մտածել, թե ինչ պիտի լինի հետագայում, ինչպես և խարհ→խորհ→խոհ→խոկ (միտք). բառերը: Այս կար || կուր || կեր || կիր արմատների տարբերակները գտնում ենք վրացերենում կերվա՝ կարել, եկարեբա՝ դիպչել, արխաղերենում աղբրա՝ բռնել, ձևքը հասցնել, երկրորդ կատեգորիայի լեզվի մեջ՝ կուր-պի կամ կար-պի՝ ձևքեր:

Այսպիսով մենք քննարկեցինք ձևը նախագաղափարը արտահայտող մի բառափունջ, որ տարբեր վարիանտներով գործածվել է հայերենում և այլ լեզուներում արտահայտելու համար ձևքի կատարած աշխատանքների զանազան տեսակները (կառուցել, կարենալ, կարել և այլն), ինչպես և մտածելու գաղափարը (կռահել), որը նույնպես արդյունք է ձևք-աշխատանքի և արտահայտվում է նույն բառով, ինչ և ձևքը (տես վերև խելք←խել> ձևք բառից):

Սակայն մեզ մնում է քննության առնել մի ուրիշ ավելի ճոխ բառափունջ, որ գոյություն ունի մեր լեզվում և արտահայտում է ոչ միայն աշխատանք և միտք գաղափարների, այլև՝ լեզվի ու բանականության (մտածողության) աղերսակցությունը:

Այդ բառափունջը, որ իրականում ոչ այլ ինչ է, քան վերոհիշյալ կար || կառ || կեր խմբի տարբերակը (k→b), ավելի ճոխ է որպես ավելի ուշ ժամանակի ստեղծագործություն, երբ ետնալեզվային կ հնչյունը դարձել է շրթնային ք և տառադարձել հին բառերը, որով առաջացել են մեր արդի բռն (ն)←կառ(ն), բար(ի)←կար, բռն(ն), բառ և վերջապես բան(ն<ք)

բառը իր երեք իմաստով (բան—աշխատանք, բան—լեզու և բան—բանականություն), որից և՛ բարել, բայ, բամբասել և այլն։ Այժմ լերլուծենք այս արմատները։ հիմնականում նրանք երեք իմաստ են պարունակում, այն է՝ ա) ձեռք (ձեռքի ֆունկցիաները), բ) խոսք կամ լեզու և գ) միտք ու բանականություն։

Ձեռքի գաղափար է արտահայտում բուն (ն) բառը, որից և բունել (ձեռքի մեջ առնել), բունի (ձեռքի ուժով, զորով), *բար (ձեռք)։ ունենք նորագյուտ բարան, որ ըստ Աճառյանի պիտի նշանակի նախաբազուկ։ Այդ արմատից իմաստաբանորեն առաջացել են բար-իք՝ գույք, ինչք, հարստություն, ձեռք բերվածք, և բարան՝ բարիք (ունի միայն Բառ. Նրեմ., էջ 49)։ Իմաստաբանության տեսակետից միանգամայն հասկանալի է, թե ինչու բարի միաժամանակ նշանակում է և՛ լավ, բարի, և՛ ինչք, քանի որ այն, ինչ ձեռք է բերել մարդը ձեռքի աշխատանքով, որի շնորհիվ և ապրել է նա, պետք է լինի լավը, բարի (համեմատել գերմաներեն gut՝ բարի և բարիք, ֆրանսերեն les biens նույն իմաստով)։ Լավ, բարի իմաստով բար արմատը գործածական է եղել և առանց ի ածանցի։ այսպես բարամուքյուն (լավ տարի և այլն)։ Մենք գտնում ենք, որ հայերեն բար մակբայական ածականը (բռնաբար, գաղանաբար) նույնպես ծագում է բար՝ ձեռք բառից, և օրինակ՝ գաղանաբար ոչ այլ ինչ է նշանակել, եթե ոչ գաղանի ձեռքով։ Այս բար ածանցը համարվում է իրանականից փոխառյալ, սակայն, ինչպես տեսնում ենք, նա բնականոն կերպով զարգացել է մեր ժողովրդի մեջ։ Այս նույն բար արմատը պետք է փնտրել և բիր, բրել, բան բառերի հիմքում (բահ < բարհել < բարել || վարել)։ Բար արմատի կրկնությամբ ունենք նաև բարբարել՝ ժամանակ չունենալ մի բան անելու, իմա՝ զբաղված լինել, աշխատանքի լինել։ Նույն բար արմատը բառ տարբերակությամբ (որ սովորական է հայերենում) ունի շատ գործածություն, սակայն չի պահել իր առաջին իմաստը (ձեռք, աշխատանք) և նշանակում է խոսք, լեզու (բառ, բարբառել՝ խոսել)։ Որ բառ կարող էր նշանակել նաև իր, ինչք, ձեռք, կարելի է համոզվել թե՛ մեր վերև բերված բառերից և թե՛ օտար լեզուների մեջ նկատվող նույն երևույթից (հունարեն լուգոս նշանակում է խոսք, բան, իր. լեհերեն ունչ, խեթերեն մեմա նույնպես նշանակում են իր և խոսք)։ Սակայն մենք ունենք նույն բար արմատի մի այլ տարբերակը՝ բան (բ || ն), որը պահել է իր երեք հիմնական իմաստները՝ մինչև այժմ իսկ։ Արգ

քննության առնենք այդ իմաստները ըստ պատմական իմաստական զարգացման, և ոչ թե մեր ներկայի մտածողությամբ բռնի կերպով ջանանք մթագնել այդ զարգացման ուղիները: Մեր բան (գործ, աշխատանք) և բան (միտք, լեզու) բանականություն) բառերը աշխատում են իրարից անջատել և տարբեր ազդեցություններով բացատրել, որ ճիշտ չէ: Բան սկզբում նշանակել է ձևը, որից և հետագայում գործ, աշխատանք, ինչք և այլն. այդ իմաստով իսկ բան արմատը դրաբարում մի քանի անգամ գործածված է,¹ իսկ աշխատավոր ժողովուրդը միայն այդ իմաստն է պահել բան բառի մեջ. (համեմատիր քշուա լեզվով՝ բան, ելամական լեզվով՝ ման (շինել), վրացերեն ուբանի, դարանի (շինվածք, բնակավայր) և վերջապես հայերեն ավան և այլ բառերը): Ի միջի այլոց հիշատակենք, որ վրացերենում բան արմատը պահված է երկու իմաստով, այսպես՝ ուբանի, դարանի (շինք, բնակավայր) և էուրենբա, ուրնորա (ասում է, ասել կամ խոսել):

Բան (գործ, աշխատանք) բառը հետագայում ստացել է լեզու, իսկ ավելի ուշ՝ նաև բանականություն, մտածողություն իմաստը: Բացատրենք այդ իմաստաշրջումը: Դրա համար հարկավոր է նախ և առաջ իսպառ հրաժարվել «ի սկզբանէ էր բանն» իդեալիստական այն մտածողությունից, որից և վերջին հաշվով ելնում է հնդեվրոպաբանությունը, որն իր ուսումնասիրություններով մեզ հասցնում է մինչև որոշ հնագույն շրջաններ, մինչև «հնիս» գոյությունը, բայց չի գնում մինչև լեզվաստեղծական մտածողության ակունքները, չի զրադվում այն կարևոր հարցով, թե ինչպես ստեղծվեց հենց թեկուզ այդ «նախածայր» լեզուն: Ենթադրվում է, որ մարդը բանական արարած է, լեզուն էլ նրան հատուկ է եղել «ի սկզբանէ»: Սակայն իրականությունը մեզ միանգամայն հակառակն է ասում: Մենք արդեն ասել ենք, որ լեզուն հասարակայնության ֆունկցիան է և զարգացել է նրա վրա որպես վերնաշենք. լեզուն չէր կարող գոյություն ունենալ և զարգանալ հասարակությունից դուրս, առանձին մարդատիպար կենդանիների գլխում. լեզվի ծագումը և զարգացումը հարկապաշտ է մարդկային աշխատանքային պրոցեսների, համակեցու-

¹ Արուեստը են սոքա երկրադործաց, որով զամբան (չմշակված, չբանված) երկիրն ածեն ի պտղաբերութիւն» (Իգնատ. ՂԿ. 235), կամ «ընդէ՞ր արտում նստեալ կայք աստ դատարկ, ամբան» (անգործ) (Անկ. Գիրք Նոր Կա., 90):

Թյան ծագման և զարգացման հետ: Քանի որ հասարակությունը ի սկզբանե չկար, այլ ստեղծվեց հաղարավոր զարերի ընթացքում, բնականաբար լեզուն էլ չէր կարող նախորդել նրան: Արդ ուրեմն, լեզուն ստեղծվել է մարդկային համայնքի կողմից աշխատանքային քրտնաշան պրոցեսների և պայքարի ընթացքում՝ իր մեջ անգիտակից կերպով արտահայտելով իրեն ստեղծող կոլեկտիվի կեցությունը: Լեզվի նոր ուսմունքի հիմնադիր Մառը գտնում է, որ նախնական մարդկանց մոտ այն շրջանում, հրբ արտադրական հիմնական միջոցը ձեռքն էր, սկզբնավորվել և զարգացել է ոչ թե հնչահոդավոր լեզուն, այլ ձեռք-լեզուն կամ կինետիկ լեզուն. ձեռքը արտադրական հիմնական միջոց լինելուց բացի, եղել է նաև հաղորդակցման միջոց: Այդ շրջանը տեղի է բաղմաթիվ հաղարամյակներ, որոնց ընթացքում ձեռք-լեզուն որպես մտածողության կոնկրետ և կոպիտ միջոց զարկ է տվել ուղեղի գործունեությանը և հող նախապատրաստել դիալեկտիկորեն խոսք-լեզվին անցնելու համար. մարդու ուղեղում կանչելու գաղափարը տպավորվել է ձեռքով անելու պատկերի մեջ. ուժեղություն, կարողություն և շնորհք գաղափարները նույնպես կապվել են ձեռքի ուժի և ճարպիկության պատկերին, խելք գաղափարը նույնպես կապված է եղել լավ ձեռք ունեցողի հետ և ձեռքով մարդ համազոր է եղել խելքով մարդուն: Քանի որ մտքերը իրար հաղորդում էին ձեռքերի միջոցով, ուրեմն և հետագայում հնչյունավոր լեզվի մեջ խոսելը պետք է արտահայտվեր «ձեռքով» բառով: Ձեռք-լեզվի տիրապետության շրջանում մարդը անշուշտ ունեցել է նաև հնչյուններ, ինչպես իր նախորդները և բոլոր կենդանիները, սակայն նրանք խաղացել են օժանդակ դեր աֆեկտներ արտահայտելու համար, ինչպես և հետագայում, հեղաշրջման ճանապարհով, նրանք անցել են գերիշխող դիրքին՝ ձեռքն ազատելով իր համար այդ երկրորդական ֆունկցիայից և նրան թողնելով միայն օժանդակ այն դերը, որ մինչև այսօր էլ նա կատարում է: Ինչպես է կատարվել այդ դիալեկտիկական թռիչքը. նա կատարվել է արհեստական գործիքների մուծման և աշխատանքային պրոցեսների բարդացման հետևանքով, որ պահանջում էր հաղորդակցության ավելի բարդ միջոց, ինչպես և արտադրական հիմնական միջոց հանդիսացող ձեռքի ազատում ոչ աշխատանքային ֆունկցիաներից: Այսպիսով լեզվի դերը՝ ձեռքից անցել է բերանի մեջ գտնվող լեզվին, որը անմիջապես ուղեղի մոտ գտնվելով, հնարավորու-

թյուն է ստեղծել զարգացնելու մտածողությունը արդեն հնչա-
արտաբերական լեզվով: Պարզ է, որ ձեռքն ալիս անկարող էր
բավարարելու զարգացած ուղեղի պահանջները, այն ուղեղի, որի
սկզբնական զարգացումը տեղի ունեցավ հենց ձեռք-լեզվի միջո-
ցով:

Պետք է ենթադրել, որ առաջին հնչաարտաբերական լեզուն
եղել է չափազանց պարզ և ճիշտ այնպես նկարագրական, ինչ-
պես էր նրա նախորդը՝ ձեռք-լեզուն: Նախկին նկարագրական
ձեռք-լեզվի բառերը այդ շրջանում թարգմանվել են հնչյունա-
վոր լեզվի՝ իրենց մեջ պահելով հիմնական նկարագիրները. այս-
պես կանչել, բերել, խոսել առաջացել են ձեռքի անունից. նույն
ձեռքի անունով են արտահայտվել նաև ուժ, կարողություն,
շնորհք, խելք և համեար բառերը, ինչպես արդեն տեսանք վերե-
վում: Սակայն ինչպես բացատրել այն հանգամանքը, որ հառ-
կանալու, ըմբռնելու գաղափարը նույնպես կապվում է ձեռքի
հետ: Շատ պարզ է՝ որ նախատրամաբանորեն մտածող մարդը
ամեն մի իր հասկանում, ըմբռնում էր միայն այն ժամանակ,
երբ նրան տիրանում էր: Արդ, որպեսզի մարդը հասկանար, ճա-
նաչեր, թե ինչ բան է, ասենք, ընկույզը, նա պետք է այն բռն-
ներ իր ձեռքի մեջ, կտորեր, միջուկը ճաշակեր և այլն. այդ
մտածողության մնացորդները կան նույնիսկ ժամանակակից կուլ-
տուրական լեզուների մեջ. այսպես ֆրանսերեն conception, per-
ception նշանակում են բռնել և հասկանալ, ռուսերեն воспринять,
воспринимать, понять նույնպես նշանակում են հասկանալ,
ըմբռնել, որ ծագել են բռնել բառից, ինչպես և հայերեն ըմբռ-
նել < բռն + բռնել > բուռն առնել բառը (համեմատիր նաև ձեռք-
հառ = խելքը հասնող):

Քանի որ մի անգամ ձեռք-լեզվի բոլոր ֆունկցիաներն ան-
ցան հողավոր լեզվին, պարզ է, որ վերջինս իր զարգացման
սկզբնական ընթացքում պետք է ընթանար այն ուղիով, որ
մշակվել էր ուղեղում դեռևս ձեռք-լեզվի ժամանակից (նկարա-
դրական մտապատկերներ ուղեղում արդեն կային):

Այսպիսով, լեզվաբանական-հնչաբանական պեղումների մի-
ջոցով մենք այնպիսի մատերիալ ենք հայտաբերում, որով մերժ-
վում է լեզվաստեղծման պրոցեսի իդեալիստական ամեն տեսակի
մեկնություն և ապացուցվում, որ մարդու բանականությունը
ստեղծվել է աշխատանքի շուրջը համախմբված ինդիվիդուների կո-
լեկտիվի քրանաջան աշխատանքի ընթացքում առանյակ և հա-

ըյուր հազարավոր տարիների ժամանակամիջոցում, և նրանց արտադրական հարաբերությունների ֆունկցիոնալ արտահայտությունն է։ Այդ բանականությունը, որը և դարձավ մարդկային կուլտուրայի կերտման հզորագույն զենքը, արտահայտվում է երկու միանգամայն անքակտելիորեն շաղկապված ոլորտներում, այն է՝ մարդկային լեզվի և մարդկային աշխատանքի։ Լեզվի մեջ է մտնում անշուշտ և մտածողությունը, որովհետև նրանք ոչ միայն տարբեր երևույթներ չեն, այլև միևնույն պրոցեսի տարբեր կողմերն էլ չեն, նրանք մեկ և ամբողջական, միասնական, երբեք չտարրալուծվող պրոցես են, որովհետև մտածելը խոսելն է առանց հնչյունների, իսկ խոսելը մտածելն է հնչյուններով։

Աշխատանք—լեզու—միտք տրիադան մարդկային ողջ գործունեությունն է իր բոլոր կողմերով, որոնք անքակտելիորեն կապված են իրար. առաջին փոփոխությունն անպայմանորեն ազդում է մյուսների վրա, իսկ վերջիններս իրենց հերթին ներազդում են առաջինի վրա, որպես նրա կադմակերպիչը։ Այս փոխազդեցությունները այնքան ավելի պարզ են, որքան պարզ են և անմիջական աշխատանքային պրոցեսները, և հետզհետե բարդանում ու խճողվում են՝ հասնելով մինչև իսկ զարգացման ինքնուրույն օրենքների, երբեք սակայն չդադարելով հասարակայնության ֆունկցիան լինելուց։

Մատերիալիստական լեզվաբանությունը, որ սովետական գիտության համեմատաբար նոր նվաճումն է, մեր առաջ բացում է լայն ասպարեզ լեզվի միջոցով բացահայտելու մարդկային հասարակական ֆորմացիաների հնագույն շրջանները, քանի որ լեզուն որպես հնագույն գաղափարախոսական արտահայտություն՝ իր մեջ ունի անսպառ հնագույն նստվածքներ, որոնք հայելու պես արտացոլում են մարդկային լեզվաստեղծման պրոցեսի բոլոր փուլերը և հնարավոր են դարձնում լեզվի ու մտածողության զարգացման նախապատմության բացահայտումը։

(1929 թ.)